ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ · ԹԻՒ 25 · ՕԳՈՍՏՈՍ 6 1852

ԱՍԱԻՍ

ԼՐԱԳԻՐ

ԱՕԳՈՒՅՏԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տարեկան գինն է 100 ղուռուշ։
Վեցամսեայ „ „ 55 „
Մէկ ծանուցումը տողին 40 փարայ է։
Երկու „ մէկ ամիսը „ 30 „ „
Չորս „ „ „ „ 20 „ „
Սորագրութիւնները կանխիկ են։
Սորագրութիւնները ամէն ամսոյն 1 ին և 16 ին կը սկսին։

Դուրս երթալիք լրագիրներուն համար ծախքը առնողին վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն, խմբագրին պիտի ուղղուի. և ասոնց համար ծախքը խրկողին վրայ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

Կեսարիայէն գրուած նամակներ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոր պաշտօնաբաշխութիւններ։ - Տրիպոլոյ մէջ պատահած վէճին խաղաղութեամբ լմննալը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ։ Պաշտօնէից փոփոխութիւն։ - Կայսերութեան խօսքը։ - Եկամտից յաջող վիճակը։ - Օգոստոս 15 ին ըլլալու մեծ հանդէսը։ - Սգրապուրկի եպիսկոպոսին աղօթքը։
ԱՍԿԱՆԴԻԱ։ Ընտրութիւններուն լմննալը։ - Անգղիայէն Քալիֆորնիա գացող գաղթականները։ - Իւրանայի մէջ եղած անկարգութիւնները։ - Գ. Օսպէրնի խօսած ճառը։ - Անգղիոյ մէջ անձնական ապատութեան յարգը։
ԻՏԱԼԻԱ։ Թոսկանայի մէջ փոփոխութիւններ։
ՀԵԼՍԻՆԳԻՈՐ։ Նախագահի ընտրութիւն։
ՍԱՐԴԵՆԱ։ Բիւմնգէի և Սալոյի գլխաւոր եկեղեցականներուն ամուսնութեան օրինաց ընդդիմութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՕԳՈՒՅՏԻՆ

Թէ որ մեր ընթերցողները կը յիշեն լրագրոյս առաջին թերթին մէջ ազգին կամ անոր մէկ մասին կամ անոր մէկ անհատին պատուոյն պաշտպանութեանը համար ըրած խոստմունքնիս, հարկաւ հետեւեալ նամակները, որ Կեսարիայէն պատուաւոր անձանց խնդրովը մեզի յուղարկուած են, լրագրոյս միջոցաւ հրատարակելուս համար մեզ չեն մեղադրեր, մանաւանդ կը կարծենք, որ մեզ կերպիւ մը պարտաւորեալ ալ կը համարին անանկ ընելու։

« Յարգոյ խմբագիր։

» Նոյեան աղաւնի անուն լրագրոյն 20 թուոյն մէջը յարգոյ թղթակցի մը յօդուածը կը կարդանք իբր տեղեկութիւն Կեսարիոյ վիճակին դպրոցներուն վրայ գրուած, որ հետեւեալ իմաստները կը պարունակէ։

« Կեսարիոյ միաբանութիւնը որով և ազգային գործոյ տրամադրութիւնը տակն ի վերայ է. երկու դպրոց կայ քաղաքին մէջ, երկուքն ալ ստակ մը չարժեր, մեծ մեծ չէնքեր բայց մեղք ազգին ստակին, որ զանոնք շիներ են . . . . . Քաղաքին բնակիչքը անձնական վէճեր ունին . . . . . ազգային հաստատութեանց կործանմանը պատճառ կ'ըլլան . . . . ։

» Արդպատրիկեան հայկական դպրոցը և Յունճուսունի դպրոցը կայ միայն գովութեան արժանի զանազան ուսմունքներով շքեղացած, որոց հիմնադիր աղայից բարեմաղթութիւն ըրի սրտի ուրախութեամբ։ »

» Որ և իցէ բանի վրայ խորհրդածութիւնը լուսանկար գործողութեան կը նմանի, որուն մէջը գրողին ոգւոյն պատկերը ամենաճիշդ նկարուած կը տեսնուի, ուստի հարկ չի մնար զանիկայ ստորագրելու. բայց մեր կողմանէ ազգային իրաւունք մը և աղնուական ու սրբազան գործ մը կը համարինք յիշեալ ամբաստանութեանց ու ստութեանց պատասխան տալը և հաստատութեամբ դիտենք, որ ասանկ առթի մը մէջ ճշմարտութեան պաշտպան կալով ազգին ծառայութիւն ըրած կ'ըլլանք։

» Մանաւոր անձ մը՝ երբոր հրապարակաւ իր ազգին մէկ երեւելի մասը կը պախարակէ, ակն յայտնի կ'իմացուի, որ կրից կը ծառայէ, ազգութիւնը վրայ ուղիղ գաղափար չունի, թէ և բամբասելու պատճառ մը ունենայ։ Իսկ եթէ յանիրաւի, նայնպիսին չէ թէ համազգի՝ այլ հայրենեաց մատնիչ կը համարուի։

» Վերոյիշեալ յարգոյ թղթակիցը, ուրուն ով ըլլալը չեմք գիտեր, առանկ է ըսեմք նէ չեմք սխալիր, որովհետեւ մարդը խօսքէն ու գործէն ճանաչելու կը պարտաւորիմք, չէ թէ խօսքը կամ գործը մարդէն։

» Այս պատուելի անձը՝ ազգը մեղքընալ ցուցունելու պատրուակաւ՝ Կեսարիոյ միաբանութիւնը լրագրի միջոցաւ ընդհանուր հասարակութեան առջեւ դատապարտութեան կը մատնէ. դպրոցական տեղեկութիւն տալու մտքով՝ Ազգային կառավարութիւնը կը բամբասէ « Կեսարիոյ միաբանութիւնը տակն ի վերայ է, չի կայ երկու հոգի միաբան » կ'ըսէ։ Այց երանի թէ անմիաբանութեան գործիք մըն ալ ինքը ըլլալը հասկնալով ամաչէր։

» Յայտնի կը տեսնուի, որ իրեն բերանն ու միտքը չեն համաձայնիր մէկ մէկու, ինքը երկու ըլլալով բազմութեան անմիաբանութենէն կը տարանջէ. չի մոռանար ընաւ, որ առ հասարակ ազգային հիմն որկութիւնները նուիրական գործեր կը համարուին։ Կեսարիոյ մէջ որչափ վարժարաններ կան նէ՝ բոլորն ալ մի և նոյն նպատակաւ, մի և նոյն շարժառիթով շինուած են, այսինքն քրիստոնէական հրահանգը, բարոյական կրթութիւնը և ազգային գրականութիւնը ծաղկեցնելու դիտաւորութեամբ։ Թոլատոս հոյակապ դպրոցին նպատակը տարբեր չէ Կեսարիոյ վարժարաններուն նպատակէն. ուստի ծիծաղական կամ լաւս մելրական է՝ միայն այսինքն Արդպատրիկեան դպրոցին հիմնադիր աղաներուն օրհնութիւն մաղթել և միներուն այսինքն Կեսարիոյ վարժարանաց եղած ծախքերուն մեղք ըսել։ Մենք թէ որ չուզեմք յայտնել, ընթերցողը կրնայ գրեթէ շօշափելով մակաբերել, կամ տեսնել հոս կուսակիցի հոգի մը, ինքզինքը միաբանասէր կարծեցնող անձ մը, որ չի կրնար իր խորհուրդը միաբանել գոնէ բանական արեւոտիւ ըլլայ։

» Յիշեալ Կեսարիոյ դպրոցներուն մէջը քրիստոնէական և եկեղեցական կրթութիւնը երբէք պակաս եղած չէ, և եթէ ուրիշ ուսմունքներ ալ ըլլային, մեր յարգոյ թղթակիցը իրաւունք չունէր և պէտք չէր որ յանդգնէր « ստակ մը չեն արժեր » ըսելու. ընդհակառակն թող ներէ մեզի ազատաբար ըսելու, որ իր գրած յօդուածն է, որ ստակ մը չարժեր ոչնչիս դատողներուն առջեւը, գուցէ ասկէց ետեւ զանիկա հրատարակող յանդգնողաբար խմբագրին առջեւն ալ։

» Քաղաքիս երեւելեաց անձնական վէճեր ունենալնին և ազգային մեծամեծ պարտքերու պատճառ ըլլալնին ալ կը հերքեմք եթէ պէտք ըլլայ։

» Այս իր կարծեաց՝ Կեսարիոյ մէջը ամէն բան փճացած լըմնցած է և ինքը ինքնիշխան գտուաւոր կեցեր է յանդիմանելու և թշնամանելու մեր քաղաքին երեւելիները և վարժարաններուն հոգաբարձուներն ու այցելուները, որոնք ամենայն ազգասէր և պատուաւոր անձինք են։ Լաւսի կ'իմացուենք այս յարգոյ թղթակցին, որ իր գրած յօդուածոյն համար պատասխանատու է ոչ միայն քաղաքիս երեւելեաց և հասարակութեան, այլ և ընդհանուր ազգին առջեւ։

» Իսկ Նոյեան աղաւնոյն խմբագիր վերապատուելոյն համար աներկբայ եմք, որ այս յօդուածը հրատարակելովը՝ իր պաշտօնը կատարեր է միամտաբար. բայց կը յուսամք որ յետ այս ճշմարտութիւնը կարդալոյ, կը զգուշանայ իր աղաւնոյն բերանը անխարդ ամէն տերեւները ձիթենիի ճիւղ կարծելով դնելու, որպէս զի անոնց թունաւոր ազդեցութենէն ազատ մնայ։

» Կը խնդրեմ, արգոյ խմբագիր, մեր ակնածական խոնարհ գրութիւնը հրատարակել պատուական լրագրոյդ միջոցաւ։

1852 յունիս 25 Տէր Մարդիրոսեան
Հանայ ի Կեսարիա։ »

« Արժանայարգ խմբագիր Մասիս լրագրոյն։

» Շատ ժամանակէ ի վեր կը ցանկայի սրախ ուրախութիւնը բարեպատեհ առիթով մը ձեզի յայտնելու ձեր ընտիր և ուղղադատ լրագրոյն վրայօք. բայց կը ցաւիմ, որ առանց աւելի երկար ժամանակի սպասել կարողանալու, իմ առաջին նամակս հետեւեալ ձախորդ նիւթովը սկսելու պարտաւորեցայ։

» Նոյեան աղաւնի լրագիրը իր 20 երրորդ թուոյն մէջ, Կեսարիոյ դպրատանց վերայ տեղեկութիւն տալ ուզելով. « երկու դպրատուն ունին որ մէկ ստակ չեն ըներ » ըսեր էր։ Այսոր խոնարհաբար սա պատասխանը կուտանք, որ թէպէտ մենք մինչեւ հիմա մեր դպրոցները ատուրդը (մէզաթ) հանելու յաջող խարհուրդը չունենալով գիներնին չէինք սորված, բայց փոխարէն, գոնէ սոնոց թիւը Նոյեան աղաւնիէն աւելի գիտնալով՝ կը ծանուցանենք, որ անոնց թիւը երկուք չէ, երեք է. ուստի թէ որ անոնց երկուքը մէկ ստակ չեն ըներ, գոնէ այն մնացած մէկը երկու ստակ կ'ընէ։

» Այս տեսակ լուրերը գիտնալով որ քանասեղծութիւն չեն կրնար ըլլալ, այլ կամ ի մօտոյ և կամ ի հեռուստ մէկը իրենց հաղորդած պէտք է որ ըլլայ, ուստի կը պարտաւորիմք զուրցելու, որ իրենց թղթակիցը ով որ է նէ՝ իր երեւեցեալութեան խաղերովը զերենք խաբել ուզեր է, որն որ թէպէտ և իրեն մեծ ամօթ է, մանաւանդ երբոր այն խաղերը աղգային իրաց (դպրոցներուն) կը վերաբերին. բայց կամ առաւել ամօթ է լրագրի մը տիրոջ, որ չգիտեր իր թղթակիցները ընտրել, ու անանկով ստոյգ լուրերը հրատարակել կարծած ժամանակը, սխրալուր զրպարտութիւններ կը հրատարակէ։

» Թէ որ Նոյեան աղաւնոյն տուած խաղաղութեան լուրերուն նայելով՝ յիշեալ դպրոցները այսքան թերթեւագին են, թէ որ մեր ըրած ջանքը անպտուղ է, և մանկանց աշխատութիւնն ալ ընդունայն, ոնց թողունք Հայոց լրագրոյն ըսածները, որ 'ի ներքոյ նոյն իսկ դպրոցաց գրեց իր երկրորդ տարուոյն 47 և 50 թուոց մէջ. և երրորդ տարուոյն 3, 35 և 52 թուոց մէջ։ Այս հակասութիւնները մեզ շփոթելու տեղը, ուրախ եմք ըսելու, որ շատ գոհ ըրած են, խորհելով որ Հայոսպան լրագիրը հարկաւ իրաք եղածը պատմած պիտի ըլլայ, ըստ որում ամէն լրագրապետի ձեռքէն գալու բան չէ ասանկ բեղմնաւոր միտք ունեցող թղթակիցներ ունենալ։

» Թէ և իրաք յիշեալ դպրոցներուն վիճակը Նոյեան աղաւնոյն ըսածին պէս ըլլար (որ քաւ լիցի), արդեօք կը վայլէ՞ որ ազգասէր ու խաղաղասէր լրագիր մը անանց թերութիւնները բոլոր աղգին առջեւն դնելով անոր սիրտը վիրաւորէր, արդեօք ասո՞ղ են անոր խոստացած ախորժելի լուրերը, ասո՞ղ են անոր տալիք խրախոյսները . . . . ։

» Թողելով ուրիշ աւելի պատկանաւոր անձանց, որ յիշեալ դպրոցներուն արդար պաշտպանութիւնը ընեն, կ'աղաչեմ, յարգոյ խմբագիր, որ այս նամակս հրատարակելու բարեհաճիք 'ի սէր ճշմարտութեան, որուն համար կանխաւ շնորհակալ ըլլալով

Մնամ ազնուութեանդ

1852 յունիս 26 Ն. Օ. Աբրահամ
Վարժապետ 'ի Կեսարիա։ »

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրովարտակաւ օգոստոս 2 ին հետեւեալ պաշտօնաբաշխութիւնները եղան։

Մեծապատիւ Մուստաֆա Նուրի փաշան՝ Տրիպոլսոյ գաւառին ընդհանուր կառավարիչ անուանեցաւ փոխանակ Իզզէթ փաշային։

Պէկրատի կառավարիչ մեծապատիւ Խուրշիտ փաշան՝ վէզիրութեան աստիճանաւ Վէլի փաշային տեղ Պոսնայի կառավարիչ անուանեցաւ։

Նիշի կառավարիչ Պէսիմ փաշան Պէկրատի կառավարիչ անուանեցաւ։

Էֆիֆ պէյը՝ կայսերական դիւանին ատենադպիր (պէյլիկճի) անուանեցաւ փոխանակ Շէվքէթ պէյին։

Նիազի էֆէնտին պէյլիճիի էսքիսարի անուանեցաւ փոխանակ Էֆիֆ պէյին։

Դարձեալ ամսոյս 4 ին՝ Թնդանօթաձիգ գօրաց հրամանատար Իշխան Մէհէմմէտ փաշան Պաղատոյ կուսակալ անուանեցաւ փոխանակ Նամըք փաշային, որ Թնդանօթաձիգ զօրաց հրամանատար եղաւ։

Ընատոլուի բանակին սպարապետ Սելիմ փաշան կայսերական անձնապահ զօրաց սպարապետ անուանեցաւ փոխանակ Ալտոի փաշային, որ Ընատոլուի բանակին սպարապետ եղաւ։

— Օսմանակալութեան պաշտօնատարներուն մէջ ալ հետեւեալ փոփոխութիւնները եղան։

Նաւահանգստի վերատեսուչ Լէյման Ըֆէնտի Լտմին պէյը պաշտօնէն հանուեցաւ, և անոր տեղը կայսերական նաւարանի Լէյման Ըֆէնտի Ահմէտ փաշան անցաւ։ Այս վերջինին տեղն ալ Մահմուտ փաշան գրաւեցաւ։

— Տեղւոյս գաղղիական ժուռնալներուն մէջ հետեւեալ յօդուածը կը կարդանք։

« Նոխրնթաց թերթումիս ծանուցեր էինք, որ Տրիպոլսոյ կուսակալին և հոն գտնուող Պաղդայի ընդհանուր հիւպատոսին մէջ վէճ մը ծագեր է երկու փախստական գաղղիացիներու պատճառաւ։ Ինչպէս, չորեքշաբթի անգղիական Պոմպէյ շոգենաւով եկած նամակներէն կ'իմանանք, որ երկու փախստականները յուլիս 17/29 ին գաղղիական իշխանութեան ձեռքը յանձնուելով վէճը խաղաղեր է, որուն համար ամէն մարդ անշուշտ պիտի ուրախանայ։ »

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԴԻԱ։ Յուլիս 29 ին՝ Մոնդէօ-պաշտօնական լրագիրը հետեւեալ փոփոխութիւնները կը հրատարակէ պաշտօնէից մէջ։

Պ. Տրուէն տը Լիւյս՝ ծերակուտին երկրորդ նախագահը՝ արտաքին գործոց պաշտօնեայ անուանեցաւ փոխանակ Պ. Թիւռկոյի։ Պ. Մայն՝ հասարակաց շինուածոց պաշտօնեայ անուանեցաւ փոխանակ Պ. Լը Ֆէպվրէ-Տիւռիֆլէի, և Պ. Աշիլ Ֆուլ՝ հարուստ սեղանաւորը՝ տերութեան պաշտօնեայ փոխանակ Պ. Բաղապիանքայի։ Հրաժարեալ պաշտօնեաները ծերակուտի անդամ եղան և կ'ըսեն թէ 30,000 ֆռանք տարեկան ռոճիկ պիտի կտրուի անոնց։ Դարձեալ կ'ըսեն, թէ Պ. Պաւոշ՝ տերութեան խորհրդոյ առաջին երկրորդ նախագահը՝ պաշտօնէից խորհրդոյն անդամ պիտի ըլլայ։ Պ. Ֆուլին պաշտօնեայ անուանելուն վրայ՝ հարիւրին 4½ ը մէկ ֆռանք վեր ելեր է, հարիւրին երեքն ալ 1,50։

— Լուի Նաբոլէոնին համար կասը ըլլալու խօսքերը այս միջոցին շատցան Գաղղիոյ մէջ, և առ հասարակ կը կարծեն, որ քիչ օրէն կը կատարուի։ Աւրդէն արձիւ նշանները ամէն տեղ դրուեցան, և Նախագահին համար ամուսնանալու խօսք կ'ըլլայ։

— Տերութեան եկամուտը ժամանակէ մը ի վեր յաջող վիճակի մէջ ըլլալով գանձին անուս կներուն մէջ պատրաստ դրամը այնչափ շատցեր է, որ ելքերէն պաշտօնեան՝ 1848 ին Գաղղիոյ դրամատունէն փոխ առնուած 50 միլիոն ֆռանքին 25 միլիոնը վճարեր է անցեալ ամսոյ 26 ին։

— Օգոստոս 15 ին՝ սուրբ Նաբոլէոնի տօնախմբութիւնն ըլլալով, մեծ հանդէսի մը պատրաստութիւն կ'ըլլայ նեքին գործոց պաշտօնէին վերատեսչութեամբը, և կ'ըսեն թէ շքեղութեանց և ցոյց տրուելիք տեսարաններուն կողմէն՝ մինչեւ հիմա եղած հանդէսներուն ամէնն ալ պիտի գերազանցէ։

Ցերեկին՝ զինուորական նուագարաններու խումբեր քաղաքին բազմամարդ կողմերը պիտի կենան և ընտիր նուագերգութիւններով ժողովուրդը պիտի զբօսեցնեն։

Սէն գետին մէջ Աւսդէրլիցի կամուրջէն մինչեւ Ուափէի կամուրջը՝ նաւամարտ և ուրիշ զուարճալի և չի տեսնուած կրթութիւններ պիտի ըլլան։

Պիլիի գետեզրին առջեւ նաւական խաղեր պիտի կատարուին և Փարիզի ժողովրդեան նոր և խիստ զարմանալի տեսարաններ ցոյց պիտի տան։ Պ. Տելօնէի Ֆրգադօն—դպրոցը՝ գետին եզերքը պիտի կենայ իւր ամէն կազմածներովը զարդարուած։ Հարիւր նաւաստի Շէրպուրկէն պիտի բերուին իրենց հրամանատարներովը և այն Ֆրգադօնին և ուրիշ պատրաստուած պատերազմական նաւերուն մէջ ծովամարտի խաղեր պիտի ձեւացնեն։ Ամէնի բոլոր նաւակավարները այս խաղերուն մասնակից պիտի ըլլան։

Օրէնադրական ժողովին պալատին առջեւը չի տեսնուած հրախաղութիւն մը պիտի ըլլայ, որուն մէջ մեծին Նաբոլէոնի և գաղղիական բանակին Սէն-Պէռնառ լեռնէն անցնիլը պիտի ձեւացնեն։

Սակիս զատ Պէռսի և Պառիէռ տը Դոռօն ըսուած տեղերն ալ հրախաղութիւններ պիտի ըլլան։

Պանտոմի հրապարակը, ուր Նաբոլէոնի արձանը դրուած է պղնձէ սիւնի վրայ, և Ռէ և Բասդիլիոն փողոցները շքեղ կերպով պիտի զարդարուին։

Պուլվառ ըսուած ընդարձակ և ծառազարդ փողոցներուն մէջ տնկուած կալի 300 ճրագարաններուն 150 ը հրեղէն արմաւենիներու պիտի փոխուին։

Թիւյլրիի պարտէզին մէջ ելեքտրական պատրաստութիւններ և դրօշակներով զարդարեալ ծառեր իրենց պայծառ լոյսը մինչեւ հեռուները պիտի տարածեն։ Մեծ աւազանին ջրոյ ցայտը գեղեցիկ պայծառութեամբ ծիածանի գոյներ պիտի ունենայ։

Ռօնքօռտի հրապարակին շքեղութիւնը խելքէ մոքէ դուրս պիտի ըլլայ։ Չի տեսնուած և կարգէ դուրս լուսաւորութիւններ պիտի ըլլան անոր մէջ։

Շանդ—Էլիզէի մէջ 62 աղբիւր պիտի դրուի՝ արձաններով, ծաղիկներով, կանանչներով և ուրիշ տեսակ տեսակ լուսաւորութիւններով զարդարեալ. 156 կապի ճրագարաններու վրայ հրեղէն արձիւներ և պակեալներ պիտի տեսնուին։ Մեծ աւազանին վրայ Նաբոլէոնի կայսեր ձիաւոր արձանը պիտի տեսնուի։

Նաբոլէոնի յաղթական կամարին վրայ ահագին մեծութեամբ արձիւ մը պիտի տրուի, որ ցերեկը մարմարիոնէ և գիշերն ալ հրեղէն պիտի երեւի։

Փարիզի մէջ ուտելիք ծախող կանանց համար պարահանդէս մը պիտի ըլլայ առաջամանակեայ սրահի մը մէջ, ուր 20,000 հոգի պիտի գտնուին։

— Սդրասպուրկի երկաթուղւոյն բացուելու հանդէսին մէջ Մոնսինեօր Ռէս Սդրասպուրկի եպիսկոպոսը հետեւեալ գեղեցիկ աղօթքը ըսեր է։

« Օրհնէ, Ամենակալ իմ, այս նոր ճանապարհը, որ այսօր կը բացուի՝ ճշմարտութեան լոյսն ու երկրիս բարօրութիւնը տարածելու համար, և գիտութիւնը հաւատոյ հետ մէկ եղած զանիկա քու պաշտպանութեանդ կը յանձնէ։

» Օրհնէ, Ամենակալ իմ, զանոնք ամենը, որ հեռաւոր խորոցներն անցնելու և միջոցը կարճեցնելու համար ինքզինքին այս ահաւոր մեքենաներուն պիտի յանձնեն։ Պահէ զանոնք ամէն արկածներէ, որ անոնց մարմնոյն և մանաւանդ հոգւոյն վնաս չի բերեն։ Մի թողուր բնաւ, որ ժամանակաւորապէս շահերու զբաղելով յաւիտենական շահերը մոռնան։ »

ԱՆԳԼԻԱ։ Ընտրութիւնները լմընցան Մեծին Բրիտանիոյ Միացեալ Թագաւորութեանց ամէն կողմը։ Բայց լրագիրները զանազան կերպով կը բաժանեն անոնց թիւը և ամէն կուսակցութիւն իր կողմը կը համարի մեծագոյն մասը։ Թայմս լրագիրը հետեւեալ կերպով կը բաժանէ զանոնք։ Պաշտօնէից կողմէն 286, ազատական 310, չափաւոր ազատական 58։ Այս վերջին կարգը աւելի պաշտօնէից կողման կը մօտենայ։ Բայց հասարակաց խորհրդարանին բուն վիճակը ճշդիւ հասկնալու համար՝ անոր բացուելուն պէտք է սպասել, որ հոկտեմբերի վերջերը պիտի ըլլայ։

Այս միայն յայտնի է, որ Ուիկ (ազատական) կողման ակնկալութիւնը խաբուեցաւ այս վերջին ընտրութիւններուն մէջ։ Բաղաքներուն մէջ որչափ շահեցաւնէ, կոմսութեանց մէջ այնչափ և աւելի կորսնցուց։ Շատ երեւելի մարդիկ չի կրցան այս նոր խորհրդարանին պատգամաւոր ընտրուիլ։

— Կոմսութեանց տեղակալները գալամիս պիտի ժողովին նոր հաստատեալ զինուորական օրինաց գործադրութիւնը ընելու համար։ Տպեալ տոմսակներ պիտի տրուի ամէն տանուտէրներու, որ իրենց ընտանեաց և սպասաւորներուն մէջ որչափ արու գտնուի նէ, անոնց թուոյն, տարիքին և վիճակին վերաբերեալ քանի մը խնդիրներու պատասխանները գրեն անոնց վրայ։

Գրասենեակներ ալ պիտի սահմանուին, կամաւ զինուոր գրուիլ ուզողներու և տրուելու վարձուց հաշիւները ընելու համար։

— Թայմս լրագրին տուած մանրամասն հաշիւներուն նայելով, այս միջոցին Անգղիայէն 5000 հոգի ամէն շաբթու գաղթական կ'երթան Բալիֆորնիա։ Ասոնց շատը աղքատ, բայց համառ մարդիկ են և իրենց ճամբուն ծախքը կը վճարեն։ Ընտանիներ ալ կան, որ տերութեան մէջ պատուաւոր վիճակի մէջ գտնուած են և քիչ դրամագլուխ կը տանին հետերնին։ Ընդունուած տեղեկութիւններուն նայելով, այս գաղթականութիւնը օր աւուր շատնալու վրայ է։

— Ընտրութեանց պատճառաւ անկարգութիւնները կը շարունակին Իռլանտայի մէջ, որոնց առաջնորդները մեծ մասամբ տեղւոյն եկեղեցականները կը համարին, բայց իրաւամբ թէ յանիրաւի չենք գիտեր։

Աէրինկ ապվերթիզրը լրագիրը հետեւեալ լուրը կուտայ Իռլանտայի Դարսընոդաուն քաղաքին վրայ։

« Բաղաքը սոսկալի գրգռութեան մէջ է, հաղատէրները կղերին ազդեցութեանը դէմ կենալէն յոյսերնին կարելով հրաժարեցան։

» Բաղաքին թեմական քահանան՝ կատղած խաժամուժին առաջքն ինկեր փողոցներուն մէջ կը պարէր։ Հակառակորդ կողման ընտրիչներէն դէմ ելածը կը բռնէ ու կղզաքի տակ կը գոցէ քահանաներու պահպանութեամբ։ Վերջապէս պապական քահանաները խելքէ մոքէ դուրս եռանդով կ'աշխատին այս գործին մէջ։ Ընտրիչներուն կանանցը կը հրամայեն, որ երիկնին բերեն իրենց ձեռքը յանձնեն, և մէկ քանին հնազանդելով անանկ ըրին։

« Թիւլէմոր և Ֆիլիբգաուն քաղաքներէն դօրաց գունդեր կուգան, խանութները գոց են, ընտրիչներուն պաշտպանութեանը համար դատաստանարանին քովը մարտկոց շինուած է։ Ամէն քաղաքը պաշարման վիճակի մէջ գրուեցաւ։ »

— Պ. Օսլըրն՝ երեւելի անգղիացին՝ Միտրիքսի կոմսութեան կողմէն պատգամաւոր ընտրուելով, շնորհակալութեան ճառ մը խօսեցաւ իր ընտրիչներուն, որուն մէջէն հետեւեալ հատուածները կը քաղենք։

« Կը յորդորեմ ձեզի, պարոններ, որ աչուընիդ չորս բանաք հիմակուան պաշտօնեաներուն վրայ։ Ասոնք առուտրական ազատութիւնը չեն սիրեր, ժողովուրդը չեն սիրեր, պաշտօն կը սիրեն, Եթէ կուզէք որ ձեր մեծ պատուոյը ձեռնտուդ շառնեն, զգոյշ կեցէք։ Պաշտպանութեան (ցորենին և ուրիշ արմտեաց վրայ տուրք կապել ուզողները) հրեշն աչքը ձեր հացին վրայ տնկած զանիկա կլլել կ'ուզէ։

» Իմ ընտրութիւնս ետ ձգելու համար, լսեցիք՝ ինչ անուններ տուին ինծի հոս։ Ըսին, թէ ես ծայրայեղ ռամիկապետական մէն եմ։ Զեմ զարմանար այս կծու խօսքերուն, որ հակառակորդներս առաջ եկած են։ Սակայն կը խոստովանիմ, որ ես ինքզինքս բաւական մաքրութեամբ և վայելչութեամբ հագուած մէկը կարծելով, շատ զարմացայ, երբոր անվարտիներու կարգ անցուցին զիս...։

» Ես ծայրայեղ ռամկապետութեան կարծիքներ չունիմ. բայց պատիւ կը համարիմ ինծի խոստովանիլ, որ ռամկապետութեան համակրութիւն ունիմ։ Մէզ կառավարող ոահմանադրութիւնէն գոհ եմ. հիմնական փոփոխութիւններու փափաք չունիմ, բայց կ'ուզեմ, որ ազգային պատգամաւորութիւնը ինչպէս պէտք է նէ անանկ ըլլայ...։

» Կը փափաքիմ, որ երկիրն ու գաղղիի հրապարակները ազդեցութիւն չունենան ընտրիչներուն վրայ։ Թէ որ ասոնք ծայրայեղ ռամկապետականութեան կարծիքներ են նէ, սիրով կ'ընդունիմ։

» Անկեղծութեամբ կը յայտնիմ ձեզի, պարոններ, որ յիսուսեսանները չեմ սիրեր, ոչ Հռոմի մէջ և ոչ հոս։ Ամէն բանէ առաջ իմ երկրիս աղէկութիւնը կը սիրեմ, և որ միջոցն որ ինծի աղէկ երեւի, թէ և Լորտ Տերպիի կամ Պ. տ'Իզրայէլիի ձեռքէ ըլլայ, կը պաշտպանեմ։ Ցիրաւի, նախորդ պաշտօնեաներուն խնալը ինծի ցաւ չի տար, բայց կը կարծեմ, որ հիմա ալ հիւանդ վիճակի մը մէջ ենք, և այս հիւանդութիւնը՝ որ կրնանք Տերպի անուանել, քաղաքականութեան տաղտութիւնը ախտացնելու համար է, բայց մեզ աւելի պիտի զօրացնէ ուրիշ յարձակմունքներու դէմ դնելու համար։

» Ուրախ եմ, որ այս ընտրութիւններուն մէջ քանի մը գէրդաստաններու և քանի մը անուններու շքեղ երեւոյթը վերցաւ, որովհետեւ կը կարծեմ, որ Անգղիա կրնայ կառավարուիլ առանց մեծ անուններու ու մեծ գէրդաստաններու։ Կը յուսամ, որ կարող կ'ըլլանք նորոգութեան հոսանքը Պ. Տերպիի փարախէն անցունելու, և որչափ որ ես Հերակլէս մը չեմ, կը յուսամ միշտ, որ այս աշխատութիւններուն պտուղը կը քաղէք . . . . . »

— Անգղիոյ մէջ անձնական ազատութիւնը ինչ կերպով ճանչցուելուն և գործի դրուելուն վրայ Ռոթիէ տը Լիօնօք լրագիրը հետեւեալ յօդուածը կը հրատարակէ։

« Ազատ անձնական ազատութիւն, շիտակը խօսելով, կանոնաւորեալ ընկերութիւն չի կրնար ըլլալ։ Դերդաստանը առանց անոր անհրաժեշտ բառ մըն է և ստացուածքը մոռցածին առասպել մը։ Ուր որ անձնական ազատութիւն չի կայ, բարեկարգութիւնն ու խաղաղութիւնը խաբեբայ ալիքներ են, որոնց հանդարտութիւնը մրրիկներ կը ծածկէ և խորութիւնը անթիւ ցաւեր ու առանձնական կսկիծներ, որ բազմութեան անտեսանելի են։ Այս օրուան օրս անձնական ազատութիւնը գրեթէ բոլոր Եւրոպային վանտուած է։ բայց թէ և բոլոր աշխարհի մէջէն վանտուի, Անգղիոյ հողէն դուրս ելելիք չունի։ Այս է Անգղիոյ սահմանադրութեան և իւրաքանչիւր քաղաքացիներուն մէկզմէկ պաշտպանելու ամենէն գեղեցիկ պարծանքը։ Ուրիշ ամէն տեղ, ապօրինաւոր կերպով մէկուն ազատութեանը գոլլելը՝ իւր դրացիին համակրութիւնը շատ չի գրգռեր։ Օրինակի համար թէ որ մէկը բերնէն խօսք մը հանելուն համար, շատ անգամ իւր քաղաքական կարծեացը համար, երբեմն ալ խռովութեան ատեն փողոցին մէջէն անցնելուն համար, թէպէտ առանց այն խռովութեան մասնակից ըլլալու բռնուելու ու բանտ դրուելու ըլլայ նէ, « Ինչու համար կը խօսի, կ'ըսեն ամէն մարդ. լաւ կենալը այնչափ դժուար բան է։ » Կամ « ինչուն պէտք

է, որ քաղաքականութեան վրայ խօսք կ'ընէ, թէ որ իր տանը գործերուն մինակ զբաղէր, այս բանը գլխուն չէր եկած։"

և կամ "ինչ բան ունի այն փողոցին մէջ խռովութեան առեն։ Չէր գիտեր որ հոն աղմուկ կայ։ Պտոյտ կրնայ ինքզինք արդարացնել։ Թաղ տուողը նստէր ու ասա բանը գլխուն չի գար։"

"Բսել է, որ այս երեք են թագաւորութեան մէջ ալ, պարզ թեթեւամտութիւն մը, խոհեմ կարծիքներ կամ միայն դիպուածը՝ կրնան քաղաքացիի մը ազատութիւնը վտանգի մէջ ձգել և անոր հետ մէկ տեղ իր հարբասութիւնը, առողջութիւնը, ընտանեկան յարաբերութիւնները և իրենցներուն կեանքը։ Պատկ պարագաներու մէջ մի՛ մեղադրելու է, անշուշտ իւր իշխանութիւնը չարաչար գործածողը, կամ ասանկ անտեղութիւններ, կամ ասանկ անտեղութիւնները։ Բայց Անգլիայի մէջ՝ բոլորովին ուրիշ կերպ է։ Բսել է որ կառավարութեան պաշտօնի մէջ եղողները երբեմն իրենց իշխանութիւնը չարաչար գործածել ջուզեն, բայց սա կայ, որ Անգլիա մէջ, մէկ մէկու երաշխաւորելու հոգի մը կայ, որով ամեն մարդ իւր գրպանին գլխուն զարնուի նէ անարդեր չի կրնար մնալ։ Հոն՝ չեն փընտրուեր, թէ մէկուն բռնարարքի կամը՝ ղահ եղողը ինչպէս կրնար այն դժբաղդութիւնէն ազատ մնալ, այլ կը մտածեն, որ այսօր անոր է նէ վաղը ուրիշին ալ կրնայ պատահիլ, և թէ որ դուռը մէկ անգամ բացուելու ըլլայ բացարձակ կամաց առջեւ, մէկը չի կրնար վստահ ըլլալ անկէց ազատելու։

"Վերջապէս մտաւորական անձնասիրութիւն մը կայ այս ազգին քով, և ասկից յառաջ կուգայ այն ազգային մեծ հոգին, որով անգլիական ժողովուրդը նշանաւոր եղած է։

"Այս խորհրդածութիւնները ընելու մեզի առիթ տուողը՝ քանի մը օր առաջ Լոնտրայի բարձրագոյն դատաստաններուն մէջ տեսնուած դատի մը պատմութիւնն է։

"Լոնտրայի բնակիչ մը տուգանքատալու արժանի պակասութիւն մը մէջ գտնուեր է։ Դատաստանական ատեանին կողմէն գինքը կը կանչեն, որ իր դատապարտութեան վճիռը լսէ։ Բայց մարդը կամ անհոգութեամբ և կամ ուրիշ ինչ և իցէ պատճառաւ ատեանին չի ներկայանար։ Այն ժամանակը Ուիլսըն դատաւորը հրաման կ'ընէ, որ գանիկայ բանտը դնեն։ Կ'երթան մարդը կը բռնեն, վրան գլուխը կը քննեն ու բանտը կը դնեն։ 15 ժամ բանտը մնալէն ետեւ թող կուտան։

"Այս բանը թէ որ Անգլիոյ մօտ երկրի մը բնակիչները լսեն, կ'ըսեն. "Մեծ դժբաղդութիւն. բանտիլ, վրան գլուխը քննուիլ ու 15 ժամ բանտը դրուիլ։ Ինչու համար ատեանին չի ներկայացաւ, որ այս ցաւալի բռնութիւններէն ազատ մնար։ Ակէց զատ այս բանին դարման ջլլար, արդարութիւնն ու կառավարութիւնը իրաւունք ունին սիրելու և իրենց բրածին պատասխանատու չեն։"

"Արդ՝ յիշեալ քաղաքացին բանտէն ելլելուն պէս դատաստանի քաշեց Ուիլսըն դատաւորը և իրեն դէմ եղած բռնութիւններուն հատուցում պահանջեց։ Դատաստանական ատեանը Ուիլսըն դատաւորին ըրածը յանցանք համարելով վճռեց, որ 100 լիրա տուգանք վճարէ այն մարդուն։ Ասիկայ կը ցուցնէ, որ Անգլիոյ մէջ անձնական ազատութիւնը՝ ամենէն մեծ բարիք համարուած է, որուն մէկը չի կրնար անպատուհաս գալիլ։"

ԻՏԱԼԻԱ։ Թրսկանայի մեծ դուքսը Սենդէքաղինոի բաղնիքներէն դառնալէն ետքը իմացուց իր պաշտօնեաներուն, որ իրենց բռնած քաղաքականութեան ճամբան իր խղճմտանքին և Հռոմի կառավարութեան առջեւ հռոմէական իշխանի մը ունեցած պարտաւորութիւններուն դէմ գալով, թէ որ չեն ուզեր հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ քաղաքականութեան սկզբունքները ընդունիլ և գործի դնել հրաժարականնին տան։

Պաշտօնեաները չի կրնալով ընդունիլ այս կերպ քաղաքականութիւն մը հրաժարականնին տուին, բայց Ի. Պ. Պոչէլլա հասարակաց կրթութեան պաշտօնէին, որ մեծ դուքսին համակարծիք ըլլալով, նոր պաշտօնէից ժողով մը կազմելու գործը վրան առաւ։

Սակայն վերջին լուրերով կ'իմանանք, որ Անգլիոյ դեսպանին միջնորդութեամբը՝ մեծ դուքսը դիտաւորութիւնը փոխելով՝ Պ. Պոչէլլան պաշտօնէն հաներ և անոր տեղը Պ. Պաւնարօթթի խորհրդականը ընտրեր է, որով հրաժարեալ պաշտօնեաներուն կողմը նորէն վրայ ելլելով, հասարակութիւնը շատ գոհ եղեր է։

ՀԵԼՈՒԵՏԻԱ։ Դաշնակցութեան երկու խորհրդարանները յուլիս 23 ին ժողովելով, յառաջիկայ տարուան համար նախագահ և նախագահի փոխանորդ ընտրեցին։

Առաջին քուէարկութեամբ՝ հիմակուան նախագահի փոխանորդ Պ. Կաէֆ, որ շատ ազատական է, նախագահ ընտրուեցաւ։ Հելուետեան դաշնակցութեան։ Բրմատական հետամուտները խիստ քիչ քուէ ստացան։

Պ. Ֆ. Հերոզէ, որ Պ. Կաէֆի պէս շատ ազատական է, նախագահի փոխանորդ ընտրուեցաւ։

ՍԱՐՏԵՆԻԱ։ Լրագրիս 26 թուոյն մէջ յիշեր էինք, որ կառավարութիւնը ամուսնութեան նոր օրէնք մը առաջարկեց պատգամաւորաց խորհրդարանին և խորհրդարանն ալ ընդունեց։ Այս օրէնքին նպատակը՝ ամուսնութիւն դաշնադրութիւնները և անոնց վաւերական կամ անվաւեր ըլլալուն որոշում քաղաքական իշխանութեան յանձնելն է, ինչպէս է Գերմանիոյ և Անգլիոյ և ուրիշ սահմանադրական կառավարութիւններու մէջ։ Սակայն Սարտենիայի եկեղեցականները այս բանին սաստիկ դէմ կը կենան։ Բիեմնդէի մէջ քան և չորս արք եպիսկոպոս և եպիսկոպոս բնղբոյ գիր մը գրեցին թագաւորին, ան ալ այն գիրը՝ պաշտօնէից առ ժամանակեայ նախագահ Լա Մարմօրա զօրավարին խրկեց։

Սակայն՝ Սաւոյի եպիսկոպոսները աւելի հեռուն գացին։ Անոնք բացարձակապէս կ'ապառնան Սաւոյի ժողովրդեան, որ եթէ այս օրինաց հնազանդելու ըլլան, իսկայն պիտի բանադրուին, կենդանութեան ատեն սուրբ խորհուրդներէ պիտի զրկուին, մեռնելու ատենին անթաղ պիտի մնան և իրենց զաւակները անհաւատ պիտի սեպուին։

Պաշտօնեաները խորհուրդ ընելով առջի բերանը սպասեցին, որ այս եկեղեցականները դատաստանի քաշեն ժողովուրդը տերութեան դէմ անհնազանդութիւն տարելնուն համար, բայց ետքը կատ կեցան մտածելով, որ յիշեալ օրէնքը դեռ ծերակուտին կողմէն ընդունելութիւն գտած և թագաւորին ստորագրուած չըլլալով, հաստատեալ օրէնաց կարգ անցած չէ, ուստի մեն ստորագրութեան ատան է իր կարծիքը զբուցելու անոր վրայ։

Կ'ըսեն, թէ Հռոմայ աթոռը Դաղլոյ տերութեան բարի խրատներէն յորդորուելով, Սարտենիայի կառավարութեան հետ այս միջոցին քաղցրութեամբ վարուելու սկսեր է և վերոյիշեալ օրինաց հակառակելու դիտաւորութիւն չի ցուցներ եղեր Ֆիէմոնդէի և Սաւոյի եպիսկոպոսներուն պէս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 2 ին՝ Իմենապատիս Տ. Յակոբ Սրբազան Պասրիարք Հայրը Հնարհաւորութեան գնաց Թարգրապատիս մեծ եպարքոս Ալի փաշային և իւր բարձր ատիճանին արժանի պատուով ընդունելութիւն գտաւ նորին Վսեմութենէն։

Ամսոյս 3 ին կիրակի օրը՝ նորին Սրբութիւնը բարեհաճեցաւ Սամաթիա երթալու յայցելութիւն մեր հրաշալի համազգի տարաբաղդիկ եղբարց և գորովական ազգու խօսքերով զանոնք միխիթարեց։

Դարձեալ ամսոյս 4 ին՝ նորին Սրբութիւնը շնորհաւորութեան գնաց Արտաքին գործոց պաշտօնեայ Մեծապատիւ Ֆուատ էֆէնտիին և արժանաւոր մեծարանօք ընդունելութիւն գտաւ յիշեալ բարձրատիճան պաշտօնէէն։

— Արարատեանց շնորհապալ Սերովբէ վարդապետը, որուն ազգասիրական հոգւով գրած գեղեցիկ նամակը անցեալ շաբթու լրագրիս մէջ հրատարակեցինք, շաբաթ օրը մայրաքաղաքս մեկնեցաւ Թէոթահրայի վիճակին մէջ թիւրքմէն գիւղ երթալու, տեղւոյն ժողովրդեան հոգեւոր կառավարութեանն ու կրթութեանը հոգ տանելու համար։

— Ղէբանդրիայէն կը գրեն, թէ Լոտէմ փաշան արտաքին գործոց պաշտօնեայ անուաներ է, Խայրէտտին փաշան առեւտրական գործոց։ Սաէփան պէյն ալ արտաքին գործոց պաշտօնէի փոխանորդ եղեր է։

— Բրուսիայի և Սաքսոնիայի թագաւորները՝ մայրաքաղաքիս արքունի բժշկական դպրոցին դասատու Պ. Բիկէրին անցեալները Տաճկաստանի վրայ շարադրած գրքին հաւանելով գիտնական արժանաւորութեան յատկացած ոսկի միտալներ խրկեցին։

— Պրուսայէն յուլիս 26 թուով կը գրեն։

"Սորեմները Պրուսայի դաշտին մէջ երեւան ելլելով մեծ վնաս ընել սկսան, առուտրականները (չարագ կամ եօնճա) բոլորովին կերան, հիմա կարգը եկաւ սեխի դաշտերուն, եգիպտացորեններն, կնճիմին (սուսամ) և այլն եւ այլն։ Այդիներուն և թթենիներուն համար ալ մեծ վախ կայ։"

— Սէլանիկէն յուլիս 21 թուով կը գրեն։

"Երկու շաբաթ առաջ Սարը Զիքթիլիկի մօտ բաղնեպան մը սպանուեցաւ իւր Սոպպէէն։

"Ընդհանուր շաբաթու ալ ուրիշ երկու սպանութիւններ եղան Պարտարի մօտ Լոֆէ փալա խանը բռուած իջեւանին մէջ։ Եօթը չարագործ գիշեր ատեն այս իջեւանը կը մտնեն ու Եօրկի Աթանաս Կուկա իջեւանապետը և անոր ապաստաւոր Միքայէլ Պալաս Եօրկին կը մրցեն։ Տեղւոյս կառավարիչը այս լուրը առնելուն պէս՝ գունդ մը ձիաւոր խրկեց, որ այս աւազակները բռնեն ու իրեն բերեն։

"Կը հաստատեն, թէ կայսերական կառավարութենէն հրաման եկած է տեղւոյս կառավարչին, որ ինքն անձամբ պորտի բոլոր քաղաքներն ու գեղերը և իւր կառավարութեան տակը գտնուող հպատակաց հանգստութեանը և բարեկեցութեանը անխոնջ հոգ տանի ինչ կրօնքէ որ ըլլան։"

— Դարդանելէն (Չանակ գալէ) կը գրեն։

"Ատատագուրթ ինքնակալը՝ իւր բնական բարեսրտութեան մէկ նոր ապացոյցն ալ տուաւ այս օրերս գաւառիս բնակիչներէն մէկուն։ Երկու ամիսի չափ առաջ Իմամ Ալի էֆէնտի անուն մէկը՝ հին տուն մը ծախու առաւ ու նորոգել տալ ուզելով, փցնելու ատեն՝ տանը պատերէն մէկուն մէջ՝ տերութեան հին դրամներու բաւական մեծ գումար մը գտաւ։ Հաստատեալ օրինաց համաձայն, այս պղտի գանձը Կոստանդնուպոլիս խրկուեցաւ տեղւոյս կառավարչին ծանուցագրովը։ Այս օրերս յիշեալ դրամոց գումարը նորէն կառավարչին խրկուեցաւ յատուկ պատուէրով, որ տանը նախկին տիրոջմէն հասկնայ թէ այն գումարը իւր ընտանեաց է։ Թէ որ ասիկայ ստուգութեամբ հաստատուի, իսկայն դրամները անոր տրուի, ապա թէ ոչ տունը ծախու առնող Իմամ Ալի էֆէնտիին։

"Կառավարիչը յատուկ ժողովով այս բանը քննելով հասկցուեցաւ, որ յիշեալ գումարը Իմամին կ'ինայ, և իսկայն անոր տրուեցաւ։ Բայց Իմամը իւր քաղաքակից Թէօղիս օղլու Ալիին (տունը ծախողը) շնորհակալ ըլլալու մտօք գումարին մէկ մասը անոր թողուց, ու զանի գտնող գործաւորներն ալ վարձատրեց։

"Օգոստափառ Ինքնակալին այս բարեսիրական գործը տեղւոյս բնակիչներուն սիրտը շարժելով, ամենքը մէկ բերան իւր անգին և պատուական կենաց պահպանութեանը կը բարեմաղթեն՝ նորին Վեհափառութեան իւր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամոցն համար։"

— Աղբիանուպոլսոյ մէջ անցեալները պատահած հրդեհին վրայ հետեւեալ տեղեկութիւնները կը գրեն տեղւոյս գաղղիական ժուռնալ լրագրին։

"Յուլիս 22 էն 23 լուսնալուս գիշերը՝ քաղաքիս գլխաւոր վաճառատեղւոյն մէջ հրդեհ մը սկսաւ։ Երկուք ու կէս ժամու մէջ 400 ի չափ խանութ, իջեւան (խան), խահվէատուն, դարոց մը, մզկիթ մը և նամակատուն մը մոխիր դարձուց։ Օդը խիստ հանդարտ էր և եթէ առաջուցմէ հարկաւոր եղած զգուշութիւնները պատրաստուած ըլլար, այսչափ արտասուք չէր թափուիր. երեկուան օրը հարուստ ու բարեկեաց մարդիկ՝ այսօր աղքատ էին ըլլար։ Եղած կորուստը 4 միլիոն ղուռուշի չափ կը հաշուեն։

"Հրդեհը գիշերուան ժամը եօթնէն առեւեները յոյ-գՀէի մը խանութին դուրսի յարկէն ելաւ, ուսկից կը հասկցուի, թէ դիպուածական բան մը չէ։

"Բաղաքիս կառավարութիւը թէպէտ ամեն կերպով աղէկ աշխատեցաւ անոր առաջքն առնելու, բայց ջուրի ճամբաները աւրուած ըլլալով, աղբիւրները ջուր չի կար։ Կրակի ջրհաներու ալ պակասութիւն կար, և ենիչերներն ալ դէշ վիճակի մէջ էին։ Մինակ Հայոց ազգին ջրհանը ամեն կողմէն գովութեան արժանի է։ Բաղաքիս պահապան զօրքերն ալ իրենց պարտքը աղէկ կատարեցին։

"Այս հրդեհէն վնաս կրողները մեծագոյն մասամբ աղքատ խանութպաններ և գլխաւորապէս խրատչիներ են։ Երեկ գիշեր ալ վաճառականացին մէկ ուրիշ կողմը՝ խանութի մը դուրսի յարկը բռնկեցաւ. գիշերուան պահապանը իսնց տալով, շուտ մը վրայ հասան կրակը մարեցին, և խանութին տախտակներուն մէջ գրուած բռնկեցնող նիւթ գտնելով, քաղաքիս կառավարչին տարին։

«Ասուած տայ, որ այս գժբաղդ դիպուածները չի նորոգին։»

— Կիրակի գիշեր ժամը 4 ½ ին աւտոմոբիլները՝ Պէյօղլու Փարմագ գաբուրը ելած տեղը հրդեհ պատահելով, 17 տուն այրեցան և մէկ տուն մըն ալ փլուցին։

— Ուրբաթ գիշեր՝ չորս հոգի թաթաւելա տուն մը բանալու ատենին տեսչութեան զինուորները վրայ հասեր և երեքը բռներ են։ Այս չարագործները առաջուց ալ քանի մը անգամ գողութեան համար բանտը դրուած են եղեր։

— Ուրբաթ օրը՝ Անգղիայէն նոր շոգենաւ մը եկաւ Սոֆիա անունով, որ նաւ պիտի քաշէ կ'ըսեն։

— Ընդհանրապէս՝ Պէյօղլուի տեսչութիւնը երկու չարագործ ձեռք ձգեց, որոնք երկար ատենէ 'ի վեր կը փնտուին եղեր։

— Ընդհանրները Լիմին ճամբայի մօտ տեսչութեան զինուորները վիրաւորող չարագործներուն երկուքը այս օրերս բռնուեր և տեսչութեան բանտը տարուեր են։

— Կը լսենք, որ Դաղղեոյ Անթ քաղաքին մէջ ընկերութիւն մը կը կազմուի մայրաքաղաքիս և Օ. միւռնի մէջ նոր շոգենաւեր բանեցնելու համար։

— Հունգարիայի նախկին իշխանապետ անուանի Քոշութը յուլիս 27 ին Ամերիկայէն Լոնտրա դարձեր է։

— Դաղղիայէն և Պելճիքայէն կը գրեն, որ շատ գործաւորներ արեւուն տակը քնանալով կաթուածամահ եղեր են։ Կը յուսացուի, որ այս ցաւալի դիպուածը՝ ազդարարութիւն մը կ'ըլլայ արեւը քնանալու վտանգաւոր սովորութիւնը ունեցողներուն։

— Եւրոպայի մէջ գտնուած առիւծներուն ամենէն ծերը, յուլիս 21 ին մեռաւ Համբուրկի մէջ քսան և վեց տարեկան։

Այս առիւծը վանդակի մէջ ծնած ու մեծցած ըլլալով, խիստ աղէկ ընտելացած ու կրթուածէրանուանի Ան Աքէնի ձեռքը, և արտաքոյ շարժմունքներ ու խաղեր ընել սովրեր էր։

— Փարիզի շատ փողոցներուն մէջ կպրածիութով, մոխրով և աւազով բաղադրեալ սալայատակ շինուած է, որ մաքուր մնալէն զատ քալելու ալ մեծ դիւրութիւն կուտայ։ Այս տարի տաքը սաստիկ ըլլալով, այս բաղադրութիւնը հալեր և քալելու դիւրութիւնը դժուարութեան փոխուեր է։

— Դաղղիոյ մէջ այս ամառ կատաղութեան դիպուածները շատնալով, կառավարութիւնը յատուկ գործակալներ հանեց, որ անտէր կամ բերանին ցուկակապ չունեցող շուները սպաննեն։ Լսանկով ամեն օր 4000 ի մօտ շուն կ'սպաննուի բոլոր Դաղղիոյ մէջ։

— Փարիզի մէջ գողութեան տեսակները որչափ շատ են այնչափ ալ հետաքրքրական և ամեն օր նոր են, ասոր համար ամենէն աչալուրջ ոստիկանները շատ անգամ պարապը կ'ելլեն։

Ընդհանրները շնորհքով հագուած մարդ մը երեւելի ապակէգործի մը խանութին առջեւէն անցնելու ատեն իբրեւ դիպուածով 2000 ֆռանքնոց հայելի մը կոտրեց։ Խանութին տէրը շփոթած վրան վազելով, հայելին գինը պահանջած ժամանակը՝ մարդը քսակէն 5000 ֆռանքնոց դրամագրաղթ մը հանեց ապակէգործին տուաւ որ հայելին գինը առնէ ու մնացածը տայ։ Խեղճը հաւատալով, կը հանէ 3000 ֆռանք ետ կուտայ մարդուն. ետքը դրամագրաղթը իր մէկ պարտատէրին տալ ուզելով, մեծ տրամութեան մէջ կ'իյնայ, երբոր կ'իմանայ, որ շինծու է։

— Դաղղիոյ Սամ գաւառէն պատահի մը մեքենականութեամբ սաստիկ յարմարութիւն և ջանք ունենալով, առաջին գործն եղաւ՝ այնպիսի շոգեկառք մը շինել, որ ամեն տեսակ ճամբու վրայ կարենայ քալել, և միանգամայն ճանապարհորդ ու վնասաբ անխափան կըրէ. խնդիր մը, որ իրմէ առաջ շատերը լուծել ուզեր են և չեն կրցած։

Այս տղան ամենեւին հարստութիւններ, քաջալերութիւն ու խրատ ստացող ալ չուներ։ Իր կամքը և ժրութիւնը միայն օգնական առնելով, ըսկրսաւ աշխատիլ։ Շատ փորձեր ու ընդունայն ջանքեր ընելէն ետեւ, վերջապէս յաջողեցաւ փոքրիկ կառք մը շինելու, որուն մէջ նստած սկսաւ ոտքին անդին պտըտիլ։ Երկրին մարդիկը աս տեսնալով, կախարդ և դիւաց արքանեակ զինքը համարեցին։

Տարի ու կէս չափ առաջ, մեր երիտասարդ մեքենագործը հասկնալով, որ իրեն պէտք եղած նպաստն ու քաջալերութիւնը մինակ Փարիզի մէջ կրնայ գտնել, իւր պզտիկ շոգեկառքովը Ճամբայ ելաւ, ու շատ նեղութիւն քաշելէն ետեւ Փարիզ հասաւ։

Ան բաղդը իւր ճամբան կ'ըսպասէր. շատ մը ընկերութիւն մը կազմուեցաւ և բաւական ստակ և յարգ վաստակելով, նոր կառք մը շինեց, որ յուսացուածէն աւելի կատարեալ եղաւ։ Կառավարութիւնը շատ փորձեր ընել տալէն ետեւ արտօնագիր մը տուաւ անոր, և այս օրուան օրս կը յուսացուի, որ Դաղղիոյ մէջ փիլիգանս ըսուած փոխադրութեան կառքերը այս նոր մեքենային միջոցաւը սկսին երթեւեկելու հասարակ ճամբաներու մէջ։

— Փարիզի Շանշ-Էլիզէ ըսուած ծառաստաններուն ճամբուն վրայ ամեն ժամանակ քանի մը կոյր մուրացկաններ կան, որ ձեռքնին մէկ մէկ դէրինէր երեսուն կամ քառասուն տարիէ 'ի վեր մի և նոյն երգը կ'երգեն։ Ասոնցմէ մէկը Ռուիք—Դուշ անուն, որ ամենէն ծերն է, ուրիշ կոյր բարեկամ մը ուներ Կալիմառ անուն որուն հետ տղայութեան ընկեր են եղեր, և այն ալ իրեն պէս դէրինէր կը փչէր քառասուն և երեք տարիէ 'ի վեր մի և նոյն տեղը։ Այսմարդը այս օրերս մեռնելով, քովէն անուշ մը ելաւ որուն մէջ 80,000 ֆռանք կար և հետեւեալ արձանագրութիւնը վրան գրուած էր։ «Իմ հինաւուրց բարեկամս Ռուիք—Դուշ, թէ որ Ասուած քու աչքերդ իմմէն առաջ գոցէ, այս անուշիս մէջի ստակը քեզի կը թողում։ Մինակ դէրինէրդ ինչ ուզեմ հետ տանիլ, անիկա մարմինիս հետ թաղէ։»

Ռուիք—Դուշ այս կտակին լուրը առնելուն պէս աչքերը խոյն բացուեցան ու նոտարին դէմը ելաւ գեղեցիկ սեւ աչուըներով, և առանց երկար քննութեան հասկցուեցաւ, որ այս երկու մուրացկանները բնաւ կոյր եղած չունին։

Այս զարմանալի դիպուածը Փարիզի մէջ խօսակցութեան նիւթ եղած է։

Կարմիր հասարակապետական Նորմանդի լրագիրը հետեւեալ հետաքրքրական դիպուածը կը պատմէ յուլիս 3 թուականով։

Լուսէկ ցերեկին՝ քաղաքիս Կոնոֆիսպուլցին 7 թիւ տանը վրայ ճանապարհորդ աղաւնի մը նստաւ։

«Այս աղաւնին առանց մեծ դժուարութեան ձեռք ձգելով՝ տեսան, որ քանի մը տարօրինակ նշաններ ունէր վրան։ Ձախ թեւին վրայ մանուսոր կարմիր նշան մը կար։ Աջկից զատ իւրաքանչիւր թեւերուն վրայ կապտագունով թագ մը կար, որուն վրայ հետեւեալ խօսքերը կը կարդացուէր։ «Իմ նշանաբանս աղտոռիւն է—93։»

Յայտնի է, որ կարմիր գոյնը 1793 ին գաղղիացւոց հասարակապետութեան արիւնհեղութիւններուն նշանն է, և 93 թիւը այս կը ցուցնէ։ Ուստի տարակայս չի մնար, որ այս բանը քանի մը յիմար ընկերականներու խելքին ծընունդը եղած պիտի ըլլայ, որ իրենց այլանդակ և վնասակար սկզբունքը տարածելու գործիք ընել ուզեր են այս պարզ ու անմեղ կենդանին։

Թիֆլիսոյ դիմացի-Նուռիի-ը։ Նինուէի աւերակներուն մէջ չեն այս օրերս քանի մը թիթենիի գերաններ (տիրէկ) գտնուեր են անարատ վիճակի մէջ։ Այս գերաններուն համար կը կարծուի, որ Երիստոսէն գոնէ 700 տարի առաջ հոն դրուած են, և 2600 տարիի չափ ժամանակէ 'ի վեր առանց փտելու մնացեր են։

Մոյոնինգոր-ի-ը։ Ամերիկայի մէջ կապարագործ մը հեռաւոր քաղաքի մը մէջ ունեցած ընկերներէն մէկուն շատ կոպար յուղարկել ուզելով, մաքս չի վճարելու համար՝ Միացեալ—Նահանգաց նախագահին արձանները թափեր է անոնցմով, ու անուններու մէջ դրած խրկեր է։ Տեղւոյն մաքսատանը մէջ անուները բացեր ու մէջը նախագահին արձանները տեսնելով, կարծեր են, որ նոր ընտրութեանց պատճառաւ այլ և այլ քաղաքներու մէջ նախագահին վրայ ժողովրդեան հաճակրութիւնը եւելցնելու մտօք կը խրկուին, առանց մաքս պահանջելու թողուցեր են, որ անցնին։

Մենոպաններու-վրայ գէղիո-ի-ն։ Մենոնատաններուն հիմնարկութիւնը երրորդ դարուն մէկ սկսած է։ Կ'ըսեն թէ նախ սուրբ Անտոնիոսի քսրը մենոնատան մը շիներ ու մէջը քաշուեր է երրորդ դարուն վերջերը։ 305 ին՝ մէկ հատ մը Ս. Ընտան շիներ է վերին Եգիպտոսի մէջ։ Հռոմի մէջ մենական կեանքը Ս. Աթանաս մտցուցեր է։ Դաղղիոյ մէջ առաջին մենաստանը 360 ին շինուեր է Փուաթիէ քաղաքը։ Իռլանտայի ա մենաստանը հինգերորդ դարուն մէջ շինուեր է։ Սկովտիայի մէջ վեցերրորդ դարուն մէջ։ Իրլանտիայի մէջ ա մենաստանը 560 ին հաստատուեր է, և Նաբօլիի մօտ Բասինօ լեռան մենաստանը 529 ին, որ աշխարհի մէջ ամենէն հարուստ մենաստանը համարուած էր և հազարներով սուրբեր հասուցած է եկեղեցւոյն։ 1414 ին՝ Կարոլոս հինգերորդին հրամանաւը 110 մենատան ու վանքեր գոցուեցան Անգղիոյ մէջ։ 1639 ին՝ Հենրիկոս ը ին օրովը՝ այս տեսակ հաստատութիւնները առ հասարակ ջնջուեցան Անգղիոյ մէջէն։ Կ'ըսեն, թէ նորոգութեան ժամանակ՝ Անգղիոյ մէջէն վերցուած 193 մենաստաններուն տարեկան եկամուտը 2,653,000 լիրա կամ 583,660 քսակ օսմանեան դահեկան դրամ է եղեր, որ ամեն մէկուն համար 3,542 քսակի չափ տարեկան եկամուտ ըսել է։

Լոանի Ն անդրեայ յարբերութիւնները։ Սովորութիւն եղած է ըսելու, թէ լուանի ծնունդն օդը կը փոխէ։ Այս դէպքը, թէ և քաղաքին ճշմարիտ չէ ալ նէ, շատ անգամ կը պատահի։ Սակայն լուանի զանազան երեւոյթներուն հետ անձրեւներուն ունեցած յարաբերութիւնը վրայ մինչեւ հիմայ եղած ամենէն ճիշդ դիտողութիւնները ասոնք են։ Այս դիտողութիւնները քսանամեայ շրջաններու վրայ ընելով, հետեւեալ միջին հաշիւը կուտան։ Լուանի ծնունդէն մինչեւ առաջին քառորդը 764 օր անձրեւ կուգայ (քսան տարուան մէջ), առաջին քառորդէն մինչեւ լրումը 845, լրումէն մինչեւ վերջին քառորդը 761, վերջին քառորդէն մինչեւ ծնունդը 696։ Այսանկով լուանի աճման ժամանակը 1,609 անձրեւային օր կայ, իսկ նուազման ժամանակը 1,457։ Տարբերութիւնն է 152 օր։ Ուսկից կը հետեւի, որ լուանի լրման մօտ աւելի յաճախ կ'անձրեւէ, իսկ ծննդեանը մօտ անձրեւը կը նուազի։

Աղբիւր—Հարտորոր-ի-ն։ Ամերիկայի լրագիրներէն մէկը՝ իրենց երկրին հին ու նոր աշխարհահամարները ու վիճակագրութիւնները իրարու հետ բաղդատելով՝ հետեւեալ հետաքրքրական դիտողութիւնները ըներ է մարդուս կենացը վրայ։

Թէ որ 10268 հոգի մէկ օրը ծնանին ու մէկանց ապրելու սկսին, ասոնցմէ միայն 1243 հոգին չեն կրնար երբէք իրենց ծննդեան տարեդարձին հասնիլ։ Մնացած 9025 հոգին իրենց երկրորդ տարին կ'սկսին, բայց մահը իր կատորածը անանկ ստատիկ կը շարունակէ մէջերնին, որ երրորդ տարուան վերջը միայն 8183 կամ գրեթէ 4/5 մասը ողջ կը մնայ։ Այլ չորրորդ տարուան մէջ՝ մարդուն կազմուածքը կ'երեւայ, որ աւելի զօրութիւն կ'ստանայ։ Մեռելոց թիւը շատ մը կ'սկսի նուազիլ, և ասանկ նուազելով կը շարունակէ մինչեւ 21 տարին, որ կատարելութեան սկիզբն ու առողջութեան վերին աստիճանն է։ 7134 հոգի, այսինքն՝ սկզբնական թուոյն 2/3 մասը՝ կենաց գործառնութիւններուն ու պատասխանատուութիւններուն կ'սկսին։ 35 երրորդ տարին մարդկութեան միջօրեան է. ասոր 6302 հոգի կը հասնին։ Դարան տարի ալ անցնելէն ետեւ, կարգերը կ'սկսին անօսրանալ (սեյրէկնալ)։ Միայն 4727 հոգի կամ 55 տարուընէ 'ի վեր ապրողներուն կէսէն քիչը ողջ կը մնան։ Այս կէսէն անդին մահը կը յաճախէ. տարուէ տարի մեռնողներուն թիւը շարունակ կերպով մը կ'աճի ու 70 երրորդ տարին 1,000 հոգի ողջ չի մնար։ 100 տարուան վերջը միայն քանի մը հոգի կը մնան ապրող. ու երբոր տարին 106 կ'ըլլայ, խաղը բոլորովին կը վերջանայ, ամենէն ետքը մընացած մէկ հոգին ալ մեռնելով։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ամէն ժամանակ՝ որ արուեստից կամ ճարտարութեանց մէջ պակաս մը կը նշմարուի, կորնչոր։ Աստուած հոգ կը քաշէ՝ Հայոց Հասարակութիւն՝ Սարգիս Խաչատուրեան Դաղղեցի պիկինին հոգալը։ որ մանկաբարձութիւն (էղելիք) արուեստին մէջ ունեցած յաջողութիւնը համար առաջին ապրճանի վկայական առած է Նաբօլիի բժշկական դպրոցէն, և Դաղղեոյ բժշկական դպրոցն ալ նոյն վկայականը ընդունիր և հաստատեր է։

Տարակոյս չունիմ, որ Հայոց հասարակութիւնը հաճութեամբ կընդունի հիպոխոնդրական գիրը, որ Սարգիսի բժշկութիւն ծաղկիը կը գրէ յիսալպիկինին համար կոստանդնուպոլսոյ բժիշկներուն։

«Հայոց և պիրելի էրբայրիկ։

«Խոտիկոն պիկինը՝ որ Դաղղեոյ Շալլէ քաղաքը ծնած է, հոդ կոգայ մանկաբարձութեան արհեստը գործածելը։

«Այս պիկինը 1841 ին՝ առաջին ապրճանի ընդունելութիւն գտած է Նաբօլիի բժշկական դպրոցէն, որոր ինչպէս գիտէք, ամենէն երեւելիներէն մէկն է։

«Յիսալ պիկինը յեր պաշտպանութիւնը յանձնելով իր ունեցած արհեստագրութիւնը արդարութեամբ ճանչնալու պարտաւորութիւն մը կատարած կըլլանք։

«Կը յուսանք, Սիրելի էրբայրիկ, որ այս մեր պաշտպանելը պիտի կընդունի, և գոնէ յիսալ յեռնորութիւն կընէ անոր։

«Հաճիցէք ընդունիլ Հայլ։

(ստորագրութիւն)....»

Սարգիս Խաչատուրեան պիկինը Պէյօղլու—Սոֆիա կիներ Դաղղեոյի դերեկին դուռը կը բնակի։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ։

Կ. ՊՕԼԻՍ Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՄԻՀԷՆՏԻՍԵԱՆ